ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 26

«28» 06 2013 թ. գ. Երևան

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ ՄՇԱԿԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դատական փորձագիտական գործունեության ոլորտը կարգավորող օրենքի նախագիծ մշակելու և գործող նորմատիվ-իրավական ակտերում փոփոխություններ ու լրացումներ կատարելու անհրաժեշտությունն ուսումնասիրելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. հունիսի 20-ի «ՀՀ դատախազության կանոնակարգը սահմանելու մասին» N 59 հրամանով հաստատված հավելվածի 9-րդ կետի 4-րդ և 7-րդ ենթակետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ)՝ հետևյալ կազմով՝

Աշխատանքային խմբի ղեկավար՝ Արմեն Հարությունյան (ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ), աշխատանքային խմբի անդամներ՝ Անդրանիկ Մանուկյան (ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ), Շուշանիկ Իսրաելյան (ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ), Կարեն Բիշարյան (ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ), Միեր Մկրտչյան (ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ), Գրիգոր Ամիրյան (ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության ավագ դատախազ), Արտյոմ Գրիգորյան (ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի պետի տեղակալ՝

համաձայնությամբ), Հայկ Հարոյան (ՀՀ քննչական կոմիտեի քրեական գործերի քննության աջակցության վարչության պետի տեղակալ՝ համաձայնությամբ), Արայիկ Ասլանյան (ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ՝ համաձայնությամբ), Սոնա Մարգարյան (ՀՀ հատուկ քննչական ծառայության իրավական ապահովման և արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ՝ համաձայնությամբ), Վազգեն Շահնազարյան (ՀՀ ՊԵԿ քննչական վարչության թիվ 3 բաժնի պետ՝ համաձայնությամբ), Արգամ Հովսեփյան («Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ համաձայնությամբ), Էմիլյա Տիտանյան («Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի իրավաբանական բաժնի պետ՝ համաձայնությամբ), Արտաշես Սուչյան («Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ համաձայնությամբ), Արամ Մելքոնյան («Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ համաձայնությամբ), Արսեն Բաբայան (ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի գիտական բաժնի պետ՝ համաձայնությամբ):

2. Աշխատանքային խմբին՝

1) Վերհանել քրեական վարույթների շրջանակում փորձաքննությունների նշանակման և իրականացման ոլորտի բոլոր այն խնդիրները, որոնց օրենսդրական լուծումը հնարավոր է տալ դատափորձագիտական գործունեության ոլորտը կարգավորող օրենքի նախագծի միջոցով,

2) Նշված խնդիրների լուծումների համադրման և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման արդյունքում մշակված առաջարկները օրենսդրական դրույթների տեսքով ներառել դատափորձագիտական գործունեության ոլորտը կարգավորող օրենքի նախագծում,

3) Քննարկել դատական փորձագիտական գործունեության ոլորտին առնչվող՝ գործող նորմատիվ-իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացը:

3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

մինչև սույն թվականի նոյեմբերի 1-ը ամփոփ տեղեկանք ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին կատարված աշխատաքների և դրա արդյունքում մշակված նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

Ա. ԴԱՎԹՅԱՆ